

## ՀՀ ֆինանսների նախարարություն

### Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 7/9

23 փետրվարի 2016 թ.

Քննարկվեց «Փրիթի Ուեյ» ՍՊԸ գանգատը ՀՀ ՖՆ հետբացթողումային հսկողության վարչության կամերալ մաքսային ստուգման 28.12.2015 թ-ի թիվ 0019 ակտի և ապրանքների մաքսային արժեքի ճշգրտման մասին 28.12.2015 թ-ի թիվ 0019 որոշման դեմ:

#### **«Փրիթի Ուեյ» ՍՊԸ գանգատում բերված փաստարկները.**

«Փրիթի Ուեյ» ՍՊԸ (այսուհետ նաև ընկերություն) զբաղվում է էլեկտրատեխնիկայի ներկրմամբ, որն իրականացվում է գործընկեր կազմակերպությունների հետ կնքված մատակարարման պայմանագրերի համաձայն: 05.05.2015թ. «Փրիթի Ուեյ» ՍՊԸ և «Կամելոտ» ընկերության միջև կնքված թիվ PWC-15 պայմանագրի 1.1. կետի համաձայն մատակարարը վաճառում է, իսկ Գնորդը գնում է ապրանքներ /կենցաղային տեխնիկա և էլեկտրոնիկա/ հաշիվ ապրանքագրերում նշված պայմանով, համաձայն INCOTERMS-2010-ի և վճարում դրանց համար ըստ պայմանագրի պայմանների: Ըստ պայմանագրի, «Կամելոտ» ընկերությունը ապրանքներ է մատակարարում «Փրիթի Ուեյ» ՍՊԸ-ին ստանձնելով մատակարարվող ապրանքի հետ կապված ողջ պատասխանատվությունը: «Կամելոտ» ընկերությունը, երբեմն ապրանքներ է մատակարարում նաև ոչ ուղղակի իր անունից, այլ երրորդ ընկերությունների միջոցով: Այդպիսի դեպքերում պարզապես տեղեկացվում է, որ «Փրիթի Ուեյ» ՍՊԸ անունով ապրանք է ստացվել, որից հետո ընկերությունը օրենքով սահմանված կարգով ստանձնում է ներմուծման ձևակերպումներ կատարելու գործընթացը: Ինչ վերաբերվում է երրորդ ընկերություններին, որպես պարզաբանում հարկ է նշել, որ վերջիններս բնավ չեն հանդիսանում ընկերության հետ գործընկերներ: Այդ ընկերությունների հետ բացակայում են «Փրիթի Ուեյ» ՍՊԸ կողմից ստանձնած որևէ պայմանագրային պարտավորություն, իսկ մատակարարված ապրանքների համար վճարումներն իրականացվում են «Կամելոտ» ընկերությանը: Այսինքն՝ մատակարար ընկերությունը ինչ կարգով և ինչ միջոցներով է իր պայմանագրային պարտավորությունը «Փրիթի Ուեյ» ՍՊԸ առջև իրականացնում, դա վերջինիս ներքին գործն է:

Որպես կանոն «Փրիթի Ուեյ» ՍՊԸ և «Կամելոտ» ընկերության միջև ապրանքի մատակարարման գործընթացը սկսում է վերջինիս կողմից կատարվող գնային առաջարկից հետո: Հերթական այդպիսի գնային առաջարկը /Proforma invoice NO 0189/ 20186 ԱՄՆ դոլար արժեքով, Cip Yerevan մատակարարման պայմանով, «Կամելոտ» ընկերությունից «Փրիթի Ուեյ» ՍՊԸ-ն ստացել է 23.06.2015թ., որի վերաբերյալ «Փրիթի Ուեյ» ՍՊԸ կողմից տրվել է համաձայնություն:

Այնուհետև, մատակարարված ապրանքը «Փրիթի Ուեյ» ՍՊԸ-ն իրեն տրամադրված 03.07.2015թ. թիվ TE02 /CIP-Երևան/ 20186 ԱՄՆ դոլար արժեքով հաշիվ-ապրանքագրի հիման վրա 08.07.2015թ. թիվ C 19608 հայտարարագրով, մաքսային /շուկայական/ արժեքով, մաքսազերծել է: Մատակարարված ապրանքի

վերաբերյալ 03.07.2015թ. թիվ TE02 /CIP-Երևան/ 20186 ԱՄՆ դոլար արժեքով հաշիվ-ապրանքագիրը «Փրիթի Ուեյ» ՍՊԸ-ին տրամադրվել է Reexpotrans-Geo LLC ընկերության կողմից: Հստակեցման համար նշենք, որ Reexpotrans-Geo LLC ընկերության հետ «Փրիթի Ուեյ» ՍՊԸ-ն չունի պայմանագրային պարտավորություններ, վերջինից ապրանք չի գնվել, հետևաբար և գումար չի փոխանցել, իսկ մատակարարված ապրանքի համար վճարումը կատարել է բացառապես «Կամելոտ» ընկերությանը:

28.12.2015թ. ՀՀ Ֆինանսների նախարարության կողմից իրականացվել է կամերալ մաքսային ստուգում: Արդյունքում՝ «Փրիթի Ուեյ» ՍՊԸ-ին ներկայացվել է ակտ, ըստ որի՝ ՀՀ մաքսային մարմիններին ընկերության կողմից ներկայացվել են ոչ ճշգրիտ տեղեկություններ՝ ՀՀ տարածք ներմուծված ապրանքների հաշիվ-ապրանքագրային արժեքների վերաբերյալ՝ հիմք ընդունելով Վրաստանի մաքսային մարմնի կողմից տրամադրված 03.07.2015թ. թիվ 29 /FCA-Բաթումի/ 35221,99 ԱՄՆ դոլար արժեքով հաշիվ-ապրանքագիրը:

Այս կապակցությամբ «Փրիթի Ուեյ» ՍՊԸ-ն ստիպված էր արդեն դիմել իր մատակարար ընկերությանը պարզաբանումներ ստանալու համար: Ի պատասխան «Փրիթի Ուեյ» ՍՊԸ 30.12.2015թ. գրավոր հարցմանը «Կամելոտ» ընկերությունը պատասխանել է, որ չեն կարող տրամադրել իրենց առևտրային գործընկերների հետ իրականացված գործարքների վերաբերյալ առանձին մանրամասներ՝ հետևաբար և դրանց վերաբերող փաստաթղթեր, քանի որ դրանք պարունակում են կոմերցիոն գաղտնիք: «Կամելոտ» ընկերությունը այդ հարցը քննարկելով իր թուրքական գործընկեր-արտադրողի հետ՝ գործարքի հաշիվ-ապրանքագրի և վճարումը հաստատող փաստաթղթի տրամադրման հետ կապված, մերժում է ստացել նաև նրանից: Մինևույն ժամանակ, «Կամելոտ» ընկերությունը հաստատում, որ ըստ 03.07.2015թ. թիվ TE02 հաշիվ-ապրանքագրի գործարքի արժեքը կազմել է 20186 ԱՄՆ դոլար: «Կամելոտ» ընկերությունը մանրամասնել է նաև իրենց թուրքական գործընկեր-արտադրողի հետ կնքված պայմանագրից որոշ դրույթներ, ըստ որի վերջինիս պարտավորությունն է ապրանքը արտադրել գործընկերոջ պահանջին համապատասխանող որակով, ամբողջովին կազմակերպել ապրանքի ժամանակին մատակարարումը «Կամելոտ» ընկերության վերջնական գնորդին /այս դեպքում՝ «Փրիթի Ուեյ» ՍՊԸ-ին/ CIP INCOTERMS պայմանով: Իր միջոցներով, պահանջված կարգով, ապահովագրել ապրանքը՝ ապահովագրական իրավիճակ առաջանալու դեպքում՝ 100% փոխհատուցելով վնասը: Վճարել մատակարարման հետ կապված բոլոր ծախսերը, տարանցիկ տուրքերը՝ հաշվի առնելով ռեէքսպորտը և Վրաստանի տարածքում կատարվող բոլոր ձևակերպումները:

Փաստորեն, «Փրիթի Ուեյ» ՍՊԸ ապրանքի մատակարարումը «Կամելոտ» ընկերության պահանջով իրականացրել է վերջինիս թուրքական գործընկեր ընկերության կողմից, և թե ինչ պատճառով է 03.07.2015թ. թիվ TE02 /CIP-Երևան/ 20186 ԱՄՆ դոլար արժեքով հաշիվ-ապրանքագրի և 03.07.2015թ. թիվ 29 /FCA-Բաթումի/ 35221,99 ԱՄՆ դոլար արժեքով հաշիվ-ապրանքագրի մեջ առաջացել է արժեքների և մատակարարման պայմանների տարբերություն, այդ հարցին «Փրիթի Ուեյ» ՍՊԸ-ն չի կարող պատասխանել: Այս պարագայում, որն է «Փրիթի Ուեյ» ՍՊԸ կողմից թույլ տրված սխալը, անհասկանալի է: Նշանակում է, որ «Փրիթի Ուեյ» ՍՊԸ այսուհետ պարտավոր է ապրանքը մատակարարող և/կամ՝ տեղափոխող ընկերությունից պահանջել բոլոր այն հաշիվ-ապրանքագրերը, որ երկրների մաքսային

սահմանները, որ հատել են դրանք: Չէ որ համաձայն /Proforma invoice NO PW 0189/ 20186 ԱՄՆ դոլար արժեքով, CIP-Yerevan մատակարարման պայմանով գնային առաջարկի, ապրանքի մատակարարումը միայն մատակարար ընկերության պարտավորությունն է եղել, դրանից բխող բոլոր հետևանքներով: «Փրիթի Ուեյ» ՍՊԸ ստնաձնում է իր պարտավորությունները մատակարարված ապրանքի վերաբերյալ տրամադրված փաստթղթերը ստանալուց հետո:

Բնավ կասկածի տակ չդնելով նաև Վրաստանի մաքսային մարմնի կողմից տրամադրված 03.07.2015թ. թիվ 29 /FCA-Բաթումի/ հաշիվ-ապրանքագրի իսկությունը, այնուամենայնիվ ուշադրության է արժանի վերջինիս /Reexpotrans-Geo LLC/ կողմից տրամադրված 03.07.2015թ. թիվ TE02 /CIP-Երևան/ հաշիվ-ապրանքագրի համարանիշների՝ մեկում թիվ 29-ը, մյուսում՝ թիվ TE02, և մատակարարման պայմանների՝ մեկում FCA Բաթումի, մյուսում՝ CIP Երևան, տարբերությունների փաստը:

«Փրիթի Ուեյ» ՍՊԸ-ն գտնում է, որ տեղին չէ իր նկատմամբ կայացված ՀՀ ՖՆ հետքացթողումային հոսկողության վարչության 28.12.2015թ. կազմված կամերալ մաքսային ստուգման թիվ 0019 ակտը և դրա հիման վրա ընդունված «Ապրանքների մաքսային արժեքի ճշգրտման մասին» 28.12.2015թ. թիվ 0019 որոշումը:

Հաշվի առնելով վերոնշյալը «Փրիթի Ուեյ» ՍՊԸ-ն խնդրում է չեղարկել ՀՀ ՖՆ հետքացթողումային հոսկողության վարչության 28.12.2015թ. կազմված կամերալ մաքսային ստուգման թիվ 0019 ակտը և դրա հիման վրա ընդունված «Ապրանքների մաքսային արժեքի ճշգրտման մասին» 28.12.2015թ. թիվ 0019 որոշումը:

### **ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.**

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ 2015թ. հուլիսի 8-ի թիվ C 19608 հայտարարագրով Արարատյան Տ/Մ ձևակերպված ապրանքների վերաբերյալ ներկայացված տեղեկությունների արժանահավատությունը ստուգելու նպատակով «Փրիթի Ուեյ» ՍՊԸ-ում իրականացվել է կամերալ մաքսային ստուգում:

Ստուգմամբ պարզվել է, որ ընկերությունը 08.07.2015թ. թիվ C 19608 մաքսային հայտարարագրով «նեոմոժում՝ ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով ձևակերպել է վրացական Reexpotrans-Geo LLC ընկերության կողմից մատակարարված 9136 կգ բրուտո և 8755.8 կգ նետո քաշով 300 հատ էլեկտրական գազօջախներ, էլեկտրական վառարաններ և գազօջախի մասեր՝ մաքսային ձևակերպումների ժամանակ ներկայացնելով Reexpotrans-Geo LLC (Վրաստան) ընկերության կողմից դուրս գրված 03.07.2015թ. թիվ TE02 հաշիվ-ապրանքագիրը 20186 ԱՄՆ դոլար արժեքով (1 ԱՄՆ դոլարը = 474.39 դրամ)՝ CIP Երևան մատակարարման պայմանով: Հայտարարագրված ապրանքների ընդհանուր մաքսային արժեքը կազմել է 10.156.409 դրամ:

Վրաստանի մաքսային ծառայության 20.10.2015թ. թիվ 21-10/109595 գրությամբ ստացված տեղեկության համաձայն՝ Reexpotrans-Geo LLC (Վրաստան) ընկերությունը «Փրիթի Ուեյ» ՍՊԸ-ին OE0597/BZ295 պետհամարանիշով մեկ տրանսպորտային միջոցով մատակարարել է 9136 կգ բրուտո և 8616 կգ նետո քաշով 300 հատ

ընդհանուր քանակով էլեկտրական գազօջախներ, էլեկտրական վառարաններ և գազօջախի մասեր՝ համաձայն Reexpotrans-Geo LLC (Վրաստան) ընկերության 03.07.12թ. թիվ 29 հաշիվ-ապրանքագրի 35.221,99 ԱՄՆ դոլար արժեքով (1 ԱՄՆ դոլարը = 474.39 դրամ)՝ FCA-Բաթումի մատակարարման պայմանի (35191.43 ԱՄՆ դոլարի էլ. սարքավորումներ և 30.56 ԱՄՆ դոլարի էլ. սարք. մասեր):

Մաքսային ստուգման ընթացքում կատարվել է հարցում «Ապավեն» ՍՊ ընկերությանը՝ վերը նշված ապրանքների մինչև ՀՀ սահման տեղափոխման արժեքը որոշելու նպատակով: «Ապավեն» ՍՊԸ 23.12.2015թ. թիվ F/15-138 գրությամբ տրամադրված տեղեկության համաձայն՝ 2015թ. հուլիս ամսին Վրաստանի Բաթումի քաղաքից մինչև Բագրատաշենի մաքսային կետ 1 բեռնատար ավտոմեքենայով 9-10 տոննա բեռի տեղափոխման արժեքը կազմել է 650-750 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ:

Հիմք ընդունելով վերը նշված տեղեկությունները՝ հաշվարկվել է ընկերության կողմից 08.07.2015թ. թիվ C19608 հայտարարագրով ՀՀ տարածք ներմուծված ապրանքների իրական մաքսային արժեքները: Արդյունքում, հաշվարկվել է պակաս հայտարարագրված մաքսային արժեք՝ գումարով 6.860.904 դրամ:

Ելնելով վերոգրյալից՝ 28.12.2015 թ-ի կամերալ մաքսային ստուգման թիվ 0019 ակտով մաքսատուրքի գծով լրացուցիչ վճարման ենթակա գումար է հաշվարկվել ընդամենը 863.463 դրամի չափով, իսկ ԱԱՀ-ի մասով՝ 1.900.954 դրամ:

Ըստ ընկերության գանգատի, մատակարարված ապրանքի վերաբերյալ 03.07.2015թ. թիվ TE02 20186 ԱՄՆ դոլար արժեքով հաշիվ-ապրանքագիրը «Փրիթի Ուեյ» ՍՊԸ-ին տրամադրվել է Reexpotrans-Geo LLC ընկերության կողմից: Ընդ որում հարկ է նշել, որ Reexpotrans-Geo LLC հանդիսանում է վրացական ընկերություն: Հետևապես, 03.07.2015թ. թիվ TE02 հաշիվ-ապրանքագրում արտացոլված արժեքի իսկության վերաբերյալ տեղեկատվություն ստանալու նպատակով հարցում է կատարվել Վրաստանի մաքսային ծառայություն: Հարցմանն ի պատասխան ստացված տեղեկությունների համաձայն Reexpotrans-Geo LLC ընկերության կողմից «Փրիթի Ուեյ» ՍՊԸ-ին մեկ տրանսպորտային միջոցով մատակարարվել է 9136 կգ բրուտտո և 8616 կգ նետտո քաշով 300 հատ ընդհանուր քանակով էլեկտրական գազօջախներ, էլեկտրական վառարաններ և գազօջախի մասեր, որոնց արժեքը համաձայն Reexpotrans-Geo LLC ընկերության 03.07.12թ. թիվ 29 հաշիվ-ապրանքագրի կազմել է 35.221,99 ԱՄՆ դոլար:

Ընկերության գանգատի համաձայն, թե ինչով է պայմանավորված 03.07.2015թ. թիվ TE02 /CIP-Երևան/՝ 20186 ԱՄՆ դոլար արժեքով և 03.07.2015թ. թիվ 29 /FCA-Բաթումի/՝ 35221,99 ԱՄՆ դոլար արժեքով հաշիվ-ապրանքագրերի մեջև առաջացած արժեքների և մատակարարման պայմանների տարբերությունը, «Փրիթի Ուեյ» ՍՊԸ-ին հայտնի չէ:

Հանձնաժողովը գտնում է, որ սույն գործում առկա ապացույցների գնահատման առումով պետական մարմնի, այն է՝ Վրաստանի մաքսային ծառայության կողմից տրամադրված տեղեկատվությունը, որի համաձայն Reexpotrans-Geo LLC ընկերության կողմից «Փրիթի Ուեյ» ՍՊԸ-ին մատակարարված ապրանքների արժեքը 03.07.12թ. թիվ 29 հաշիվ-ապրանքագրի համաձայն կազմել է 35.221,99 ԱՄՆ դոլար, բոլոր դեպքերում հիմնավոր է: Հետևապես իրավաչափ են նաև 28.12.2015 թ-ի կամերալ մաքսային ստուգման թիվ 0019 ակտով լրացուցիչ պարտավորությունների հաշվարկումն ու առաջադրումը:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

### ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

ՀՀ ՖՆ հետբացթողումային հսկողության վարչության կամերալ մաքսային ստուգման 28.12.2015 թ-ի թիվ 0019 ակտը և ապրանքների մաքսային արժեքի ճշգրտման մասին 28.12.2015 թ-ի թիվ 0019 որոշումը թողնել անփոփոխ, իսկ գանգատը՝ մերժել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել տեսչական մարմինների միասնական բողոքարկման հանձնաժողով կամ ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ